

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ  
2021

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ  
ԵՎ  
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱՏ 3

Խմբի համարը  
Նստարանի համարը


*Հարգելի՛ դիմորդ*

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդա՛ յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող ես դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարելի է օգտագործել սևագրության համար: Ուշադիր եղիր պատասխանների ձևաթուղթը լրացնելիս.

- ընտրովի պատասխանով առաջադրանքներում քո ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դի՛ր X նշանը (միևնույն սյունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ),
- 45-50-րդ և 66-68-րդ առաջադրանքներում՝ յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան համարների տակ, դի՛ր X նշանը:

Մաղթում ենք հաջողություն:

## Ա մակարդակ

1 Ո՞ր շարքի բոլոր բառերում կրկնակ բաղաձայն կա:

- 1) տա-ասեռ, ըն-ենմ, կե-ե, հե-եմիստական
- 2) կեղ-ամ, եր-ենցաղ, չո-որդ, այ-ենարան
- 3) օ-ան, տա-ալուծել, ու-եվճար, մ-կածուփ
- 4) անբե-ի, անդո-ագիր, հո-երգություն, տանջա-ուկ

2 Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *խ*:

- 1) տա-տակ, դժո-ք, գմբու-տ, գա-տնիք
- 2) թ-պամած, խա-տել, հա-ճաղյուս, ապու-տ
- 3) կմա-ք, բո-կ, բա-տակ, նա-շավոր
- 4) բարա-յուն, կ-տար, ու-տաղրուժ, թու-թ

3 Ո՞ր շարքի բոլոր բառերն են երկվանկ:

- 1) ծանր, նկատել, բժիշկ
- 2) մկան, աստղիկ, կյանք
- 3) սպա, անձրև, ինչևէ
- 4) բարձունք, կրունկ, էակ

4 Ո՞ր շարքի բոլոր բառերում հնչյունափոխություն կա:

- 1) գգուշացում, կայսրուհի, դյուրահնչյուն, ատենակալ
- 2) կոշկակար, գարնանացան, ճշմարտացի, հոգատար
- 3) ջրասուզակ, մածնաբրդոշ, չվերթ, ելևէջում
- 4) ուրվական, երեսուներորդ, ստահող, գերեվարություն

5 Ո՞ր շարքի բոլոր բառերի ընդգծված *է-ն* է արտասանվում *է*:

- 1) գուգերգ, ամենաերազկոտ, ակներև, վերելք
- 2) գետեզր, ինքնատեռ, ապերջանիկ, աներեր
- 3) զարկերակ, մեներգ, նրբերշիկ, տասներեք
- 4) կիսանփ, անեզր, առերևույթ, ուղերթ

6 Ո՞ր տարբերակում է տառակապակցության թվային արժեքը ճիշտ նշված:

- 1) ՁԷ-77
- 2) ԾԹ-59
- 3) ՀԳ-83
- 4) ԽԵ-65

7 Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են կազմված հոմանիշներից:

- 1) ասպնջական-հյուրընկալ, առանձին-մեկուսի, առինքնել-թովել
- 2) հունցել-շաղախել, զանազանել-տարբերել, բաղադրել-բաժանել
- 3) գերդաստան-ընտանիք, սանձահարել-զսպել, բարեկեցիկ-վտանգագերծ
- 4) դար-հարյուրամյակ, հորդածուփ-շվայտ, ընձյուղել-ծլարձակել

8

Ո՞ր տարբերակում բառի սխալ բացատրություն *չկա*:

- 1) *սողոսկել* – մեկի դեմ դավեր լարել, *սնանկ* – նյութական միջոցներից զուրկ
- 2) *թեզանիք* – հնամաշ զգեստ, *բանուկ* – աշխույժ երթևեկություն ունեցող
- 3) *գրչակ* – վատ գրող, *դրասանգ* – ծաղիկներից պատրաստված հյուսակ
- 4) *ասպար* – պաշտպանական զենք, *ճրագալույց* – ճրագները հանգցնելու ժամը

9

Ո՞ր տարբերակում դարձվածքի իմաստի սխալ բացատրություն *չկա*:

- 1) *ձայն բարբառո հանապատի* – պատասխան չստացած խոսք, *խարխախ գցել* – սկսված գործը ձախողել
- 2) *ձեռքը քարի տակ* – հնարավորությունից զուրկ, *օձիքը բռնել* – համառորեն պահանջել
- 3) *բախտավոր աստղի տակ ծնվել* – մեծ հաջողություն ունենալ, *լեզու առնել* – ուրիշին նմանակել
- 4) *գրքի մի երեսը կարդալ* – կյանքից դասեր չբաղել, *շատ ջուր վերցնել* – վեճերի առիթ տալ

10

Ո՞ր տարբերակում են ճիշտ նշված բոլոր այն բառերի համարները, որոնք գործածված են փոխաբերական իմաստով:

*Գետ էր, գետափ էր, անտառ էր, 1. հով էր, Սունկի 2. բուրմունքից կեչին 3. գինով էր, Կեչին 4. չոքել էր արահետին Եվ կարծես մի քիչ գույնը գցել էր... Անձրևն իր 5. խոսքը ասել-սյրծել էր, 6. Չայնը տվել էր 7. պղտոր գետին:*

- 1) 2, 3, 5, 7
- 2) 3, 4, 5, 6
- 3) 1, 3, 4, 6, 7
- 4) 4, 5, 6, 7

11

Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությանը ածանցավոր:

- 1) բարձրուղեշ, ստորադաս, մենաստան, անկարգ
- 2) տրամաչափ, ձեռնոց, գերած, մակբայ
- 3) հոգևոր, կանխիկ, դիպակ, արդյունք
- 4) հրաման, փաստացի, երկրորդ, եղեգնուտ

12

Ո՞ր շարքի բոլոր բառերում հոդակապ կա:

- 1) բազմաթիվ, տարեվերջ, ծաղկաշթա, հոգեորդի
- 2) այգեպատ, դռներուռ, լուսահորդ, կորամեջք
- 3) ցորնամորթ, հնադար, քաջագուն, անդրադարձ
- 4) սարալանջ, դառնանուշ, գարեջուր, անբարետես

13

Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *վա* հոլովման:

- 1) ժամանակ, ցերեկ, դար, երբ
- 2) գիշեր, ամիս, շաբաթ, ժամ
- 3) բույս, տարի, առավոտ, վաղը
- 4) օր, ամանոր, երեկ, ձմեռ

14

Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում *-ներ* վերջավորությամբ:

- 1) չափահաս, վառելանյութ, ծխամորճ, հերթապահ
- 2) քղանցք, վաչկատուն, վագր, վիպագիր
- 3) շիկամուկ, այգեգործ, կաթնասուն, խաչակիր
- 4) սերմնացան, զորամաս, ատամնաբույժ, հրձիգ

15

Ո՞ր շարքի բոլոր բառերն են ածականներ:

- 1) գիտական, ապաշնորհ, առատաձեռն, այնպիսի
- 2) արևելյան, թունավոր, մարդկային, քնքուշ
- 3) կողմնորոշիչ, բանախոս, պերճաշուք, մեղմ
- 4) ուշիմ, գծավոր, պատեհապաշտ, դաժանորեն

16

Ո՞ր շարքի բոլոր բայերն են *և* խոնարհման:

- 1) մտանք, հասած, սուրում են, տառապած
- 2) եկել է, տեսած, վագում են, նստած
- 3) կերավ, փախչում է, տարանք, սևացել
- 4) կանգնում են, ծիծաղող, հագավ, առնում

17

Ո՞ր շարքի բոլոր բառերն են դերանուններ:

- 1) այլ, ոչ ոք, ամենայն, մինչդեռ
- 2) համայն, իրենք, ինչ-ինչ, միմյանց
- 3) նման, որոշ, քանիներորդ, այստեղ
- 4) նույնքան, ինչպես, փոքր-ինչ, ոմն

18

Ո՞ր տարբերակում բառի ձևաբանական վերլուծության սխալ *չկա*:

*Նրա դեմքը գունատվել էր, աչքերը կայծակներ էին արձակում հակառակորդի վրա, իսկ նա մերթ ցատկում էր տեղից հանկարծակի խայթվածի պես, մերթ քարանում:*

- 1) *պես* – կապ, հետադրություն, *հանկարծակի* – որակական ածական
- 2) *նրա* – անձնական դերանուն, սեռական հոլով, *գունատվել էր* – սահմանական եղանակ, կրավորական սեռ
- 3) *տեղից* – գոյական, բացառական հոլով, *մերթ* – կրկնադիր շաղկապ
- 4) *քարանում էր* – անկատար անցյալ, սոսկաձանցավոր բայ, *խայթվածի* – հարակատար դերբայ, սեռական հոլով

19

Տրվածը ինչպիսի՞ նախադասություն է:

*Սև գիշեր, և՛ հուշեր, և՛ խոհե՛ր անհամար,  
Մոռացված երազներ, շուշաններ թառամած:*

- 1) անենթակա
- 2) թերի
- 3) անվանական անդեմ
- 4) բայական անդեմ


20 Ո՞ր շարքի բոլոր բայերն են պարզ (առանց բայական ածանցի):

- 1) ցատկոտել, լուսավորել, ջարդել
- 2) կառուցել, բռնել, կտրտել
- 3) կառչել, կեղտոտել, քաշքշել
- 4) շնչել, ավարտել, հուզվել

21 Ո՞ր նախադասության մեջ վերաբերական չկա:

- 1) Ա՛խ, ո՞ւր էր թե գեթ մի աստղիկ ինձ ժպտար:
- 2) Թող ոչ մի գոհ չպահանջվի ինձնից բացի:
- 3) Մի՞թե ես պիտի երգեմ քեզ օրոր:
- 4) Կտրի՛ճ սիրտս գերի մնաց սև աչքերին, էլ ի՞նչ երգեմ:

22 Ո՞ր նախադասությունն է համապատասխանում տրված գծապատկերին:



- 1) Նա, որ այդքան փորձառու էր, բանակցությունները վարում էր բացառիկ վարպետությամբ, և Փիլոնը ստիպված էր հստակ ու կոնկրետ պայմաններ հանձն առնել՝ չնայած խորամանկությանն ու փորձին, որպեսզի դիմացիներն իրեն խաբված չզգա:
- 2) Այն ժամանակ, երբ այս անվեհեր հյուրերը տեղավորվեցին դուրսի սեղանի մոտ, Ռաֆայելը, որ երեկ ճաշից հետո ինչ-որ պատրվակով դուրս էր եկել, զգուշությամբ չքացել, ներկայացավ հանդիսավոր դեմքով:
- 3) Դուք կսարսափեիք, երբ տեսնեիք այս մարդկային դեմքերը, հառաչանք կարձակեիք, երբ հոգնած աչքերով ձեզ դիմավորեին նրանք, ում դուք անսահման կարոտել էք:
- 4) Հյուրերը, որոնք ցանկանում էին կամաց-կամաց ցրվել, ծանր հառաչանք արձակեցին. նրանք զգացին, որ իրենց թևերն ու ոտքերը թմրել են, և սաստիկ թուլություն են զգում:

23 Ո՞րն է տրված նախադասության տրամաբանական ճիշտ շարունակությունը:

*Երբ ուշ գիշերին ծխից մթնած սրահում նախազահր քվեարկության դրեց նոր գյուղատեղ փոխադրվելու հարցը, ճրագի թույլ լույսի տակ բարձր մեկնած ձեռքերի հետևում մի սլահ չերևացին փափախները. ....*

- 1) որոնք ուրախ աղմուկով դուրս եկան:
- 2) որովհետև ճրագը թարթում էր լույսի հետ և տաքություն տալիս:
- 3) թվաց, թե հսկա մի մարմին բյուր ձեռքեր է պարզել դեպի սևացած առաստաղը:
- 4) մինչդեռ ճրագի հետ վաղվա հույսը ջերմություն էր սփռել սրահում:

24 Ո՞ր նախադասության մեջ բացահայտիչ կա (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Որոտում է ձորն ի վար Հոսում է ինքը ինքը Նորին մեծություն փլված երկինքը:
- 2) Եվ որպես գերին հլու իր բեռին Տանում եմ կյանքիս օրերն անվրդով:
- 3) Ես նրանից հուր եմ ուզում Անշեջ հուրը սրբազան:
- 4) Մեր առջև բացվեց մի հրաշք տեսարան բիրիլական լեռն էր:

25

Ո՞ր հատվածում բաղադրյալ ստորոգյալ *չկա*:

- 1) Ջուրը տվեց հողին ծարավ,  
Տիղմ ու փրփուր ծովին ծարավ,  
Այս էր ամբողջը:
- 2) Կարծես մի գույգ սիրահարված  
Տատրակ դարձել և այս պահին  
Տիեզերքն է իջել հանկարծ  
Պատշգամբիս քիվաքարին:
- 3) Թե մի՞ֆ էիր դու... Եկան, երգեցին  
Մի հին իրիկուն գուսանները ծեր...
- 4) Ո՞վ իմանա, պետք է անցնեն  
Մութ աշխարհից, սև ջրից.  
Ո՞վ իմանա, պետք է փախցնեն  
Յոթգլխանի դևերից:

26

Ո՞ր նախադասության մեջ ժամանակի պարագա *չկա*:

- 1) Երբեմն ինձ հարցնում է իմ տեսած քաղաքների, իմ կարդացած գրքերի մասին:
- 2) Ջրտուքի այդ գիշերներին լուսինը շողք էր գցում առվի մեջ:
- 3) Մինչև գառիվայրի սկիզբը ճանապարհն անցնում էր փոքրիկ տափարակով:
- 4) Անպամած այդ օրից հետո չեմ բարձրացել բրուտների ճանապարհով:

27

Թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում տեքստի տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:

1. Հանրահայտ Մեռյալ ծովի ջուրն արտակարգ աղի է, այնքան աղի, որ նրա մեջ չի կարող ապրել ոչ մի կենդանի էակ: Արևմտյան Ասիայի տոթակեզ, անանձրև կլիմայի պատճառով ջուրն արագ գոլորշիանում է ծովի մակերևույթից: Բայց միայն մաքուր ջուրն է գոլորշիանում:
2. Մեռյալ ծովի մեծ աղապարունակությամբ է պայմանավորված նրա այն առանձնահատկությունը, որ այդ ծովի ջուրը նկատելիորեն ծանր է սովորական ծովերի ջրերից: Այդ ծանր հեղուկի մեջ հնարավոր չէ սուզվել:
3. Լուծված աղերը մնում են ծովում և մեծացնում ջրի աղիությունը: Ահա թե ինչու Մեռյալ ծովի ջուրը պարունակում է ոչ թե 23% աղ (ըստ զանգվածի), ինչպես ծովերի ու օվկիանոսների մեծամասնությունը, այլ 27% և ավելի:
4. Մեր մարմնի կշիռը նկատելիորեն փոքր է նույն ծավալով խիտ աղի ջրի կշռից: Հետևաբար մարդը Մեռյալ ծովում, ըստ լողալու օրենքի, ջրի երեսն է դուրս գալիս այնպես, ինչպես հավի ձուն, որը խմելու ջրի մեջ սուզվում է, բայց աղի ջրի երեսն է դուրս գալիս:

- 1) 2, 1, 4, 3
- 2) 1, 3, 4, 2
- 3) 1, 3, 2, 4
- 4) 4, 1, 3, 2

28

Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:

*Աշակերտները հնարավորություն ունեցան առնչվելու ձեռագիր ..... :*

- 1) մատյանների շուրջ
- 2) մատյաններից
- 3) մատյանների հետ
- 4) մատյաններին

**29** Ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում բուք պիտի դրվի:

*Դա Պոնտացի Պիդատոսին ուղղված նամակն էր(1) կնոջ կողմից շարադրված: Նա գրում էր(2) Ամուսինս ես շատ եմ խնդրում անուղղելի վնաս չպատճառես այն թափառականին որ ինչպես խոսում են(3) Զրիստոս է կոչում իրեն: Համաձայն շատերի կարծիքի(4) այդ մարդն անվնաս է: Իսկ որ նա իրեն իբրև թե Աստծու որդի է հռչակում(5) ամենայն հավանականությամբ չարախոսություն է: Դու գիտես(6) ինչ խառնակիչ մոլագար մարդիկ կան մեր շուրջը: Իսկ ինչ երազ էի տեսել երեկ(7) հետո կպատմեմ հիմա միայն ուզում եմ ասել(8) անեծք չբերես ոչ քո ոչ էլ ժառանգներիդ գլխին(9) վնասաբեր վճիռ կայացնելով:*

- 1) 2, 4, 5, 8, 9
- 2) 1, 2, 6, 7, 8, 9
- 3) 1, 4, 6, 7, 8, 9
- 4) 2, 3, 4, 5, 7

**30** Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը գործածված չէ:

*Ճայերը թրջում են ջրի թևերը,  
Ճախրում ու ճչում են օդում,  
Քամին քանդակում է չքնաղ քո թևերը,  
Շոյում է վարսերը քո թուխ:*

- 1) հանգավորում
- 2) շրջադասություն
- 3) չափազանցություն
- 4) փոխաբերություն

**31** Տրված բնութագրումը 5-րդ դարի հեղինակներից որի՞ ստեղծագործությանն է վերաբերում:

*Կերտված է հայ կրթական, լուսավորչական գործչի առաջին պատմագեղարվեստական կերպարը:*

- 1) Ագաթանգեղոսի
- 2) Փավստոս Բուզանդի
- 3) Դազար Փարպեցու
- 4) Կորյունի

**32** «Մասնա ծռեր» էպոսի («Մասունցի Դավիթ» համահավաք բնագիր) ո՞ր հերոսն է ծնվում՝ ձեռքի ավում մի կաթիլ արյուն սեղմած:

- 1) Փոքր Սիերը
- 2) Բաղդասարը
- 3) Մեծ Սիերը
- 4) Դավիթը

**33** Գ. Չոփրայի «Չարուղոն» նորավեպում Չարուղոնը, տեսնելով իր սիրած աղջկան ուրիշ երիտասարդի հետ, չի սպանում վերջինիս, որովհետև՝

- 1) ավստում է իր՝ դժվարությամբ ձեռք բերված ազատությունը:
- 2) խղճում է Վասիլիկին:
- 3) նրան արժանի չի համարում իր վրեժին:
- 4) զգում է, որ այդպիսով չի կարող վերադարձնել իր սիրած աղջկան:

34

Թվերի ո՞ր դասավորությունն է համապատասխանում բանաստեղծության հատվածների հաջորդականությանը:

1. Նորից ես մանուկ եմ այսօր,  
Գրախտ է նորից իմ հոգում
2. Մանում ու հեքիաթ ես ասում,  
Մանում ես անվերջ ու արագ
3. Նայում եմ, մինչև որ անգոր  
Գլուխս ծնկիդ է թեքվում
4. Սիրում եմ պարզկա քո լեզուն,  
Ձեռներդ մաշված ու բարակ

- 1) 2, 1, 4, 3
- 2) 4, 1, 2, 3
- 3) 4, 2, 1, 3
- 4) 2, 4, 3, 1

35

Մ. Նալբանդյանի ո՞ր բանաստեղծությունն է ավարտվում «Նա այլ չէ լսում դելֆյան հարցուկին» տողով:

- 1) «Իտալացի աղջկա երգը»
- 2) «Ազատություն»
- 3) «Ապոլլոնին»
- 4) «Մանկության օրեր»

36

Ա. Շիրվանզադեի «Քառս» վեպի ո՞ր հերոսի խոսքն է.

*«...19-րդ դարը, սիրելի՛ս, խաբեության դար է, իսկ այդ դարը դեռ չի վերջացել»:*

- 1) Մարտիսանյանի
- 2) Սմբատի
- 3) Միքայելի
- 4) Մարկոս ադա Ալիմյանի

37

Գ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպում հայ նախարարների կեղծ ուրացությունից հետո ո՞ւմ է Հազկերտը պատանդ վերցնում:

- 1) Բաբիկին ու Ներսիկին
- 2) Վարազդուխտին ու Կողակին
- 3) Վասակին ու Գաղիշոյին
- 4) Չոհրակին ու Ատոմին

38

Ո՞ր շարքի բոլոր ստեղծագործությունների հեղինակն է Ե. Չարենցը:

- 1) «Տաղ անձնական», «Հեռացումի խոսքեր», «Ռավեննայում»
- 2) «Մահվան տեսիլ», «Հայրենիքիս հետ», «Դանթեական առասպել»
- 3) «Էլի գարուն կգա», «Դեպի լյառը Մասիս», «Վահագն»
- 4) «Ամբոխները խելագարված», «Որպես Լատերտի որդին», «Գանգրահեր տղան»

39

Տրված բառազույգերից քանի՞սն են կազմված հականիշներից.

խորդուբորդ–ողորկ, տամուկ–չոր, հարթ–ծանձաղ, դալար–ստվար, կայուն–անգոր,  
մանվածապատ–դյուրին, սևեռուն–անքթիթ:



40 Նախադասություններից քանիստ՞ում ստորակետ *չպիտի* դրվի (նախադասությունները կետադրված չեն):

- Ատրպատականի այժմյան թեմակալ Անդրեաս եպիսկոպոսը ուշադրության առնելով այս խնդիրը իր կողմից չի խնայի ոչ մի ջանք հոգևոր կառավարությունը մաքրելու հին կեղտերից:
- Այսբան ժամանակ է մենք ամուսնացած ենք և դեռևս որևէ վեճ չի եղել մեր միջև:
- Դեպքերը սկսվեցին հետևյալ կերպ Չարուհի անունով մի օրիորդի մոտ կասկածելի գրություններ հայտնաբերեցին և նրան ձերբակալեցին:
- Հաղթահարելով բազում խոչընդոտներ տղան գտավ եղբորը և միասին շտապեցին դեպի իրենց մանկության տնակը:
- Իմ առջև փռված են հայրենի դաշտերը խաղաղ ու հարազատ դաշտերը:

41 Տրված բառերից քանիստ՞ում ուղղագրական սխալ կա.

դաստիրակ, աշխարհացունց, բամբիշ, կերկերուն, փռփռալ, մտացածին, լուսընկա, հայթհայթել, կծկտուր:

42 Նշվածներից քանի՞սն են Նահապետ Քուչակի հայրենները:

«Աշխարս մե փանջարա է», «Ես աչք ու դու լոյս, հոգի՛», «Տու՛ր ինձի, Տե՛ր, ուրախությունն անանձնական», «Աղուո՛ր, քեզ բան մի կասեմ», «Ժամ-ժամ զիմ դարիպուրինս», «Եկին ու խապար բերին», «Թամամ աշխար պտուտ էկա»

43 Ընդգծվածներից քանի՞սը դերբայական դարձված *չեն* (նախադասությունները կետադրված չեն):

- Նավթի հետ գործ ունենալը պատճառ էր դարձել նրա մականվանը Մագուրի Համո:
- Բանաստեղծը տեսավ թե ինչպես է ժողովուրդը գլուխ տալով ողջունում մեծատունին:
- Նայում էր փողոցին պատշգամբի բազրիքին կոթնած և հանկարծ նկատեց մոտեցող կառքը:
- Նա գրում էր երկար անշտապ մոռացած դեպի լուսաբաց թեքվող խավարի մասին այլևս չլսելով գիշերային ձայների արձագանքը:
- Տղան կանգնում էր ժայռի գլխին պարսատիկը թափով պտտում և քարը գարկված ագռավի պես թայրտալով ընկնում էր ձորը:

44 Տրված նախադասության մեջ քանի՞ կապ կա:

Հետո, երբ խավարը թանձրացավ, ու ճրագները մեկ-մեկ հանգան, որպես հսկումի կրակ մնաց միայն անտառի խարույկը, որի շուրջ նստոտել էին խոզարածները, և անտառապահի տնակի լուսավոր պատուհանը, որ բլրի վրայից անթարթ աչքի պես նայում էր գյուղին:

45 Տրված բայաձևերից որո՞նց կազմությունն է սխալ.

1. տուժվեցի, 2. վազի՛, 3. մի՛ կեր, 4. մոտեցրեցի, 5. դառա, 6. մզացրել է, 7. սառչել էի, 8. խոսացի՛նք, 9. բռա:

46

Ո՞ր բառերն են կազմությամբ բարդ.

1. բազկաթոռ, 2. հատկանիշ, 3. միջնորմ, 4. դասալիք, 5. սառցադաշտ, 6. ծածկալեզու,
7. քառանկյուն, 8. մեծարգո, 9. քաղցր-մեղր:

47

Ո՞ր բառերի (բառակապակցությունների) միայն առաջին բաղադրիչն է գրվում մեծատառով.

1. ՇՐԻ ԼԱՆԿԱ, 2. ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ, 3. ՄԵՐՉԱՎՈՐ ԱՐԵՎԵԼԶ, 4. ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ, 5. ՄՈՎՍԵՍ ՄԱՐԳԱՐԵ, 6. ՏՐԴԱՏ Գ ԱՐՔԱ,
7. ԴԱՎԹԱԿ ՔԵՐԹՈՂ, 8. ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳԻ ՄԵԾ ԴՔՍՈՒԹՅՈՒՆ,
9. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ:

48

Բարդ ստորադասական նախադասություններից որո՞նք են սխալ փոխակերպված պարզի:

1. *Նա հանկարծ մտածեց այն մասին, որ իր նման մարմնեղ կնոջ համար ծիծաղելի է այդ փաղաքշական անունը:*  
Նա հանկարծ մտածեց իր նման մարմնեղ կնոջ համար այդ ծիծաղելի փաղաքշական անվան մասին:
2. *Ճանապարհի եզրերին էլեկտրասյուներ կան, որ լույս են տանում լեռների ծալքերում ծվարած գյուղերին:*  
Լեռների ծալքերում ծվարած գյուղերին լույս տանող էլեկտրասյուներ կան ճանապարհի եզրերին:
3. *Մեր ժողովրդի երգն այնքան հարուստ է ու գունագեղ, որ հիացնում է անգամ օտար արհեստավարժ երաժշտագետներին:*  
Մեր ժողովրդի երգը անգամ օտար արհեստավարժ երաժշտագետներին հիացնելու չափ հարուստ է ու գունագեղ:
4. *Բոլոր դժբախտությունների բուն արմատն այն է, որ մարդ չի բավարարվում իր ունեցածով:*  
Բոլոր դժբախտությունների բուն արմատն է մարդու՝ իր ունեցածով չբավարարվելը:

49

Ո՞ր նախադասություններն են գրաբարով:

1. Եթե դու յորս հեծցիս Յազատն ի վեր ի Մասիս, Ջքեզ կալցին քաջք, տարցին Յազատն ի վեր ի Մասիս...
2. Երբ կու ծաղկին միտքս ու հոգիս, լեզուս իմ հանց պըտուղ կու տայ:
3. Ընդ եղեգան փող ծո՛ւխ ելաներ, Ընդ եղեգան փող բո՛ց ելաներ, Եւ ի բոցոյն վազեր խարտեաշ պատանեկիկ...
4. Շուշանն շողեր հովտին, շողշողեր դեմն արեգականն...
5. Նա կը հիշեցնե այն չքաղված խաղողի հատիկը, որ կեցած տեղը, բիրտ հպումներն հեռու թռմելով, ավելի ևս կը քաղցրանա:

50

Ըստ Բաֆֆու «Մամվել» պատմավեպի առաջաբանի՝ նշվածներից որո՞նք են քաղցրահամ հայ պատմիչների երկերում:

1. ժողովրդական ու եկեղեցական տոների և հանդեսների նկարագրությունը
2. մեր թագավորների և իշխանների կենցաղի ու ընտանեկան կյանքի նկարագրությունը
3. հայ ժողովրդի առօրյա կյանքի նկարագրությունը
4. թագավորների և նախարարների քաջագործությունների նկարագրությունը

## Բ մակարդակ

51 Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *մ*:

- 1) հա-պատրաստից, ա-պամած, շա-բուտ, գա-փռ
- 2) ը-բռնել, սուսա-բար, ա-բարտակ, ա-բարիշտ
- 3) ա-փոփել, հա-բավ, ա-բարտավան, ա-բավ
- 4) կշտա-բել, ա-բասիր, թու-բ, ս-բակ

52 Ո՞ր շարքի բոլոր բառերի (կապակցությունների) բաղադրիչներն են գրվում *միասին*:

- 1) բուժ(գննում), ժամկետ(անց), ոսկե(դարյան), նոր(նորքցի)
- 2) լի(ու)լի, մի(անձնյա), ի(շահ), լույս(ընծայում)
- 3) հինգ(հարկանի), (հյուսիս)արևմտյան, իննսուն(ամյա), (առ)այն
- 4) հետ(միջօրե), (տասն)ամյա, փոխ(ծովակալ), կենաց(մահու)

53 Ո՞ր շարքի բոլոր բառերն ունեն միևնույն ածանցը:

- 1) ապերջանիկ, ապարոշ, ապշահար
- 2) վարդակ, վտակ, պտուտակ
- 3) կղզյակ, արգելակ, միակ
- 4) ապաբախտ, ապիկար, ապստամբ

54 Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:

- 1) Ավանդությունը մեզ է փոխանցել այս պատմությունը հերոս իշխանի մասին:
- 2) Ակութներում հանգան վերջին կրակները, և վրանախումբը ընկղմվեց խավարի մեջ:
- 3) Գ-ժվար էր առանց սարսուռի նայել հողածածկ այդ հյուղակների մեջ բնակվող մարդկանց դեմքերին:
- 4) Հայ ժողովուրդն իր խորին երախտիքն է հայտնում Ֆրանսիային՝ ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծ ընդունելու համար:

55 Ո՞ր նախադասության մեջ մակբայ կա:

- 1) Բազմած լուսնի նուրբ շողերին, Հովի թևին թռչելով՝ Փերիները սարի գլխին Հավաքվեցին գիշերով:
- 2) Նրա՝ ածուխի պես սև ու խիտ մորուքն սկսվում էր հենց աչքերի տակից ու ծածկում ամբողջ երեսն ու կոկորդը, անգամ արծվային քիթը ծածկված էր մազերով:
- 3) Այնտեղ՝ կապուտակ ջրերի ծոցում, իր խաղաղ օրերն էր անցկացնում էն քաջն անվեհեր:
- 4) Կբանան ոմանք իմ գիրքը գուցե, կթերթեն դանդաղ, կկարդան տողեր:

56 Ո՞ր նախադասության մեջ շաղկապի սխալ կիրառություն կա:

- 1) Մեր օրերում խիստ անհրաժեշտ է, որպեսզի հայ ազգը միասնական լինի:
- 2) Ոչ թե պետք է քննադատել նրան, այլ ճիշտ ներկայացնել կատարվածը:
- 3) Պապ թագավորը նյարդայնանում էր, քանի դեռ Կոստանդինն իրեն ընդունելության չէր արժանացրել:
- 4) Թեև արշավախումբը փլուզման պատճառով արտաքին աշխարհից լրիվ մեկուսացման մեջ էր հայտնվել, այնուհանդերձ ոչ մեկը խուճապի չէր մատնվել:

**57** Ո՞ր նախադասության մեջ անկանոն բայ կա:

- 1) Ու պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հագած...
- 2) Առանց ընկճելու երկրի թշնամուն Նրա սուրբ երբեք չի մտել պատյան:
- 3) Ինձ թաղե՛ք, երբ կարմիր վերջալույսն է մարում ...
- 4) Մահախուճապ սերունդների Աչքն է դիպել լույս գագաթին Ու անցել...

**58** Ո՞ր նախադասության մեջ ներգործող խնդիր կա:

- 1) Մարդու ողբերգությունը սկսվում է սեփական անգործությունը գիտակցելուց:
- 2) Ես ինձնից գոհ եմ, որովհետև ահա երեկվա գյուղացի՝ հիմա լրիվ ազատված եմ հովիվ դառնալու և հողացավից նվալու վտանգից:
- 3) Գարնանային երկինքը պատվել էր սև ու մռայլ ամպերով:
- 4) Ի՞նչ է պահանջվում գյուղի ղեկավարությունից. պահանջվում է, որ թույլ տան ձի պահել:

**59** Բարդ նախադասություններից որի՞ ստորադաս նախադասության պաշտոնն է սխալ նշված:

- 1) Ասում են՝ ուռին աղջիկ էր ինձ պես: (*ուղիղ խնդիր*)
- 2) Ինչ տալիս եմ, այն է մնում զանձարանում իմ սրտի: (*ենթակա*)
- 3) Ծաղիկներ էին շաղ տալիս նրանց ճանապարհին, ովքեր հաղթանակած էին վերադառնում հայրենիք: (*հատկացուցիչ*)
- 4) Բոլորովին էլ պատահական չէ, որ մեր մոլորակին սպառնում է համընդհանուր տաքացման վտանգը: (*ուղիղ խնդիր*)

**60** Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:

*- Ավելի լավ չէ՞ր լինի, - ասաց ուսուցիչը տնօրենին, - որ Դուք բոլորիս համար ընդունելի որոշում կայացնեիք և մեզ չչարչարեիք:*

- 1) Ուսուցիչը տնօրենին ասաց, թե ավելի լավ չէր լինի, որ նա իրենց բոլորի համար ընդունելի որոշում կայացներ և մեզ չչարչարեր:
- 2) Ուսուցիչը տնօրենին ասաց, թե արդյոք ավելի լավ չէր լինի, որ նա իրենց բոլորի համար ընդունելի որոշում կայացներ և իրենց չչարչարեր:
- 3) Ուսուցիչն ասաց տնօրենին, թե ավելի լավ չէր լինի, որ նա բոլորիս համար ընդունելի որոշում կայացներ և իրենց չչարչարեր:
- 4) Ուսուցիչը տնօրենին ասաց, թե արդյոք ավելի լավ չէր լինի, որ նրանք իրենց բոլորի համար ընդունելի որոշում կայացնեին և իրենց չչարչարեին:

**61** Պնդումներից որո՞ւմ սխալ կա:

- 1) Պատմվածքը և նորավեպը (նովել) փոքր ծավալի արձակ երկեր են, որոնք աչքի են ընկնում սրընթաց գործողությամբ, պատմվող դեպքի բացառիկ բնույթով և անսպասելի վախճանով:
- 2) Երգիծանքը իրականության գեղարվեստական արտացոլման ձևերից մեկն է, որին հատուկ է ծաղրը:
- 3) Պոեմները լինում են պատմողական (էպիկական), քնարական (լիրիկական) և քնարապատմողական (լիրո-էպիկական):
- 4) Դրամայի մեջ կարող են լինել ինչպես ողբերգական, այնպես էլ կատակերգական առանձին երանգներ, բայց դրանք չեն դառնում բացարձակորեն գերակշռող:

62 Ո՞ր բառն է բաց թողած:

*Աչքս դիպավ աչքի բոցին,  
Ու գլուխս կախեցի.  
Ժպտաց ..... առեղծվածի,  
Հավերժական կանացի:*

- 1) բույրով
- 2) սիրով
- 3) խինդով
- 4) ժպտով

63 Ընդգծվածներից քանի՞սն են հանգման անուղղակի խնդիր:

Մոկաց իշխանը՝ Արտակը, իջավ նժույգից, սանձը տվեց քիկնապահին և գգուշորեն մոտեցավ այն խրճիթին, որտեղ թողել էր իր սիրած աղջկան՝ Անահիտին, որը վաղուց կարոտ էր ապաքինման:

64 Բառազույգերից քանի՞սն են կազմված հոմանիշներից.

դրվատել- նախատել, ատյան-դատարան, հանուն-համար, կողակից-ամուսին, արտևանումը-հոնք, վարանել-տարակուսել, խոհեմ-շրջահայաց:

65 Նախադասություններից քանիստ՞ն վաղակատար ճևաբայ (կախյալ դերբայ) կա:

- Եվ սպասեց այդպես նա գլխահակ, Ինչպես վայել էր հեզ հպատակին:
- Սերուն են նրանք և այն վայրենուց, Որ էլ չէր կարող ապրել քարայրում:
- Ոչ ոք չի լսել սկիզբը նրա և չի լսելու վախճանը նրա:
- Նրանց ձգված մկաններում ուժն է մստել խոնավ հողի...
- Հեշտ է գուցե գրքեր գրել, ոչ թե կարդալ...

66 Ո՞ր նախադասություններում կետադրական սխալ կա:

1. Երբ գորքն ընկրկեց և սկսեց հետ-հետ շրջվել՝ շփոթված, բաժան-բաժան, և փղերն էլ սկսեցին դեսուդեն վազվզել՝ կնճիթները վեր պարզած, հրամանատարը մի պահ երկմտելուց հետո որոշեց անցնել հակահարձակման:
2. Երբեմն նրա աչքին ընկնում էր մի շքեղ բզեզ կամ թիթեռ՝ գունավոր թևերով և ակնաալիչ դիտում էր, թե ինչպես են մրջյուններն անընդհատ աշխատում:
3. Նա մստել էր գետի ափին ու ակնդետ նայում էր հոսող ջրին, և անընդհատ փոխվող ալիքների հետ՝ փոխվում էին խառնիճադանջ մտքերը:
4. Կաշվե բազմոցի վրա՝ աթոռների, թափթփված էին ինչ-որ նամակներ:
5. Ուշադիր էր արդյոք նա իր ծնողների նկատմամբ՝ չեմ կարող ասել, բայց այդպես էր ցույց տալիս:
6. Շատ ու շատ դարեր առաջ Հունաստանում մի գեղեցիկ աղջիկ էր ապրում՝ եղնիկի պես գեղակազմ, նոճու պես սլացիկ:

67 Ո՞ր բառերում ածանցի հնչյունափոխություն կա.

1. պատմագետ, 2. ծաղկեփունջ, 3. միջնաբերդ, 4. գործնական, 5. ուժգնորեն,
6. գետնանուշ, 7. բռնակալ, 8. անասնաբույժ, 9. փափկասուն:

Պիզայի նշանավոր աշտարակը՝ Իտալիայի տեսարժան կոթողներից մեկը, որի շինարարության համար պահանջվել է մոտ 200 տարի, կառուցումից կարճ ժամանակ անց սկսել է թեքվել, և մինչև այժմ թեքման գործընթացն ավարտված չէ: Նրա թեքությունը անհանգստություն է պատճառում պատմամշակութային հնությունների պահպանման խնդիրներով զբաղվողներին: Ամբողջ աշխարհի գիտական միտքն այսօր միջոցներ է որոնում թեք աշտարակի շտկման համար:

Համանման աշտարակ կար Անգլիայում՝ Լոնդոնից 100 կմ հեռավորության վրա գտնվող գավառական մի քաղաքում: Դրա շինության հիմքում հողը մոտ երկու մետր փոս էր ընկել՝ մոտ հինգ աստիճանով թեքելով աշտարակի դիրքը: Կառույցը փրկելու նպատակով բնակիչները, որքան էլ տարօրինակ է, դիմել էին մի զինվորականի, որը ճարտարապետ չէր: Վերջինս, ուսումնասիրելով հիմքի հատվածը, եզրակացրել էր, որ աշտարակը կառուցված է հեղուկ պարունակող կավահողի վրա: Ժամանակի ընթացքում հեղուկը հոսել է, իսկ կավահողը՝ ծանրության պատճառով նստել: Նա հրահանգել է թեքված մասի հակառակ կողմում փորել հողը, խողովակներով հեղուկը հանել և աշտարակի պատերից կախել մետաղյա ծանրոցներ: Չարմանալի է, բայց թեքությունը մի քանի ամսում շտկվել է, և աշտարակը մինչ օրս ուղիղ կանգնած է:

1. Անգլիական աշտարակը հիմքի տակից ջրերի արտահոսման պատճառով ժամանակի ընթացքում թեքվել է:
2. Անգլիական աշտարակն ամեն վայրկյան կարող է ընկնել, այդ պատճառով ամբողջ աշխարհի գիտական միտքն այսօր միջոցներ է որոնում թեք աշտարակի շտկման համար:
3. Պատմամշակութային հնությունների պահպանման խնդիրներով զբաղվողներին հայտնի է մի թեքվող շինություն ուղղելու բավական հաջող փորձ:
4. Պիզայի նշանավոր աշտարակը, որը կառուցումից հետո 200 տարի մնացել է ուղղաձիգ, վերջին տարիներին սկսել է թեքվել:
5. Լոնդոնի մոտակայքում գտնվող աշտարակը փրկելու առաջարկը ստացել ու այն իրագործել է ճարտարապետական կրթություն չունեցող մի զինվորական:

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է*, *Միայն է*, *Չգիտես* տարբերակներից որևէ մեկը:

1. *Այնպիսի, այնպես, այնքան* ցուցական դերանունները գերադաս նախադասության կազմում կարող են հանդես գալ որպես հարաբերյալ:
2. Բարդ ստորադասական նախադասության բաղադրիչ նախադասությունները միմյանց կարող են կապակցվել թե՛ շաղկապներով, թե՛ հարաբերական դերանուններով:
3. Բարդ նախադասության կազմում կարող է միակազմ բաղադրիչ նախադասություն լինել:
4. Ստորոգելի ստորադաս նախադասության գերադաս նախադասությունը պարտադիր ունենում է բաղադրյալ ստորոգյալ:
5. Բոլոր բարդ ստորադասական նախադասությունները փոխակերպվում են պարզի:
6. Բարդ նախադասության ստորադաս բաղադրիչի կազմում գտնվող *որ, երբ, ինչպես, ուր* դերանունները պարտադիր հարաբերական դերանուններ են:

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Մասալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:

1. *Չ* հոդը կարող է լինել ստացական, դիմորոշ կամ ցուցական:
2. Ստացական հոդերը փոխարինում են անձնական դերանվան սեռական հոլովին:
3. Ստացական հոդերը բառին հաղորդում են որոշյալության իմաստ:
4. Հայերենում *ս, ղ, ն, ջ* հոդեր կարող են ստանալ միայն գոյականները և դերանունները:
5. Ստացական հոդ ունեցող գոյականը գրական արևելահայերենում սովորաբար ունենում է անձնական դերանվան սեռական հոլովաձևով հատկացուցիչ:
6. Հայերենի բոլոր գոյականները իրենց բոլոր հոլովաձևերով կարող են որոշյալ առումով հանդես գալ: